10069621

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ minister@moh.am

08.08.2014 N ԱՆ/11/8217-14

Ձեր N ____________

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ
ՊԱՐՈՆ ՆԵՐՍԵՍ ԵՐԻՑՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Երիցյան

ՀՀ կենտրոնական բանկից ստացված 2014 թվականի հուլիսի 25-ի թիվ 15.1-07/0194-14 գրության կապակցությամբ կից Ձեզ է ներկայացվում «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ առողջապահության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունը:

Միաժամանակ վերոնշյալ նախագծերի վերաբերյալ ներկայացվում է հետևյալ դիտողությունը.

«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում առկա է որոշակի անորոշություն: Մասնավորապես, օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 3-րդ կետում առաջարկվում է «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ մասում 2-րդ

նախադասությունում «5-օրյա ժամկետում» բառերը փոխարինել «հինգ աշխատանքային օրվա ընթացքում» բառերով, մինչդեռ օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Օրենքի նոր խմբագրությամբ շարադրված 6-րդ հոդվածի 9-րդ կետում 5 աշխատանքային օրվա փոխարեն սահմանվում է 3 աշխատանքային օրը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Կատարող՝ Աշոտ Խլոյան
ՀՀ ԱՆ իրավաբանական վարչություն
Հեռ.՝ 56-56-81

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 23-ի N 1104-Ն որոշման պահանջներով

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

**«Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի ընդունման դեպքում**

«Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ